[374807]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«05» հունիսի 2019 թ. N 71-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով, հաշվի առնելով նախարարությունում ստացված բանավոր, գրավոր դիմումներում, ահազանգերում, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող հանգամանքների մասին վկայող տվյալները, դրանց արագ արձագանքման, այդ իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքներին) արագ և արդյունավետ օգնություն կազմակերպելու նպատակով, ինչպես նաև խրախուսելով փոխօգնության հանրային վարվելակերպի տարածումը

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

1.Հաստատել «Սոցիալական շտապ օգնության համակարգի ձևավորման ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն).

1) միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետին՝ ապահովել միջազգային և հասարակական կազմակերպությունների միջոցով անհրաժեշտ ապրանքատեսականու

ձեռքբերումը՝ որպես սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման պահուստ.

2) սոցիալական աջակցության վարչության պետին՝

ա. սույն հրամանով հաստատված Ծրագիրը տրամադրել ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած կողմերին.

բ. միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության հետ համատեղ մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը մշակել «Սոցիալական շտապ օգնության արագ արձագանքման պահուստ» տեղեկատվական համակարգի խնդրի բովանդակային նկարագիրը.

գ. համակարգել Ծրագրի կատարման շրջանակներում Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի համայնքների ղեկավարների) աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների, այսուհետ՝ երկուսը միասին՝ ՍԱՏՄ) հետ աշխատանքները.

դ. աշխատանքներ տանել Ծրագրի շրջանակներում մարզերում (Երևան քաղաքում) սոցիալական շտապօգնության տարածքային կետերի հիմնման նպատակով հասարակական կազմակերպությունների ցանցի ձևավորման և դրա գործարկման ուղղությամբ.

ե. ապահովել սոցիալական շտապօգնության տարածքային կետերի հիմնման պահանջներին բավարարող և Ծրագրին միանալու ցանկություն ցուցաբերած հասարակական կազմակերպությունների՝ ազգային և տեղական մակարդակներում սոցիալական համագործակցության համաձայնագրին միանալու գործընթացը.

3) իրավական ապահովման բաժնի պետին՝ մինչև ս/թ հունիսի 15-ը լրամշակել ազգային և տեղական մակարդակներում սոցիալական համագործակցության համաձայնագրերը՝ արտացոլելով Ծրագրից բխող դրույթների ներառումը

4) անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ ապահովել Ծրագրի 14-րդ կետով նախատեսված մասնագետների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարումը.

5) աշխատանքի և զբաղվածության վարչության պետին՝ մինչև ս/թ սեպտեմբերի 1-ը միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի

վարչության պետին տրամադրել սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված հաշվառման էլեկտրոնային մատյանի նկարագիրը.

6) «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրենին՝ սույն կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ և 4-րդ ենթակետով նախատեսված բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական ենթահամակարգի «Սոցիալական շտապ օգնության արագ արձագանքման պահուստ» բաղադրիչի և կամավորների հաշվառման էլեկտրոնային մատյանի ծրագրային խնդրի բովանդակային նկարագրի հիման վրա 7-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություն տեխնիկական առաջադրանքի մշակման ժամկետի վերաբերյալ:

3.Սահմանել, որ

1) սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման պահուստի համար կենտրոնական պահեստային տնտեսության և կազմակերպական գործառույթներն իրականացնում է «Երևանի N 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ), իսկ մարզերում գործում են տարածքային պահեստային տնտեսություններ, որոնց կազմակերպական գործառույթներն իրականացնում են տեղական աջակցող ցանցերում ընդգրկված և արագ արձագանքման պահուստի համար պահանջվող պայմաններին բավարարող հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ).

2) ապրանքատեսականին (մթերքը) ՊՈԱԿ-ում մուտքագրվում է այն տրամադրող կազմակերպության (անհատ բարերարի) կողմից տրված գրության կամ միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետի զեկուցագրի կամ հանձնման-ընդունման ակտի (արձանագրության), իսկ ՀԿ-ում՝ հանձնման-ընդունման ակտի (արձանագրության) հիման վրա.

3) Ծրագրի 7-րդ կետի 3-րդ և 9-րդ կետի 1-ին ենթակետերով նախատեսված ակցիաների արդյունքների (հավաքագրված ապրանքատեսականին՝ իր քանակներով) մասին արձանագրությունը կազմվում է երկու օրինակից՝ այն կազմակերպած կամավորների կողմից, որի մեկ օրինակը տրամադրվում է ՊՈԱԿ-ին կամ ՀԿ-ին: Արձանագրությունը ստորագրում են ակցիայի բոլոր մասնակիցները.

4) հաշվառման փաստաթղթերում նշվում է նաև տվյալ ապրանքատեսակի օգտագործված լինելու (չլինելու) հանգամանքը.

5) ապրանքատեսականին (մթերքը) պահուստից դուրս է գրվում սոցիալական աջակցության վարչության պետի, իսկ մարզում (քաղաք Երևանում)՝

ՍԱՏՄ պետի, զեկուցագրի հիման վրա, որում նշվում է նաև տեղեկությունը ստանալու աղբյուրը, որին կցվում են համապատասխան ՍԱՏՄ-ների կողմից ներկայացված գրություն-տեղեկանքները:

4.ՊՈԱԿ-ի տնօրենին և առաջարկել ՀԿ պատասխանատուին՝

1) ապահովել որպես սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման պահուստ ձեռք բերված ապրանքատեսականու (այդ թվում՝ մթերքի) պահեստային տնտեսության պահպանման առանձնացված պայմաններ, հաշվառման մատյան (էլեկտրոնային և թղթային՝ մատյանը համարակալված, թելակարված և վերջին թերթի դարձերեսին՝ կարի վրա փակցված պիտակով), դրանց մուտքի-ելքի առանձին փաստաթղթեր.

2) մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրը, ինչպես նաև Ծրագրի 7-րդ կետի 3-րդ և 9-րդ կետի 1-ին ենթակետերով նախատեսված ակցիաների արդյունքում ստացված ապրանքատեսականին և դրա մասին արձանագրությունը՝ ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում նախարարության սոցիալական աջակցության վարչություն ներկայացնել՝ հաշվետու ժամանակահատվածում ստացված և բաշխված ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն, իսկ ՀԿ-ի պատասխանատուն՝ մարզի ՍԱՏՄ-ներին:

5.Նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝

1) Զանգվածային լրատվական միջոցներով ըստ ամենայնի լուսաբանել Ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը՝ պարբերաբար իրազեկելով բնակչությանը Ծրագրի 5-րդ կետով նախատեսված ապրանքատեսականու՝ անհատ քաղաքացիների կողմից մասհանումներ, հասարակական, բարեգործական կազմակերպությունների կողմից հատկացումներ կատարելու հնարավորության մասին.

2) Ծրագրի 7-րդ կետի 3-րդ և 9-րդ կետի 1-ին ենթակետերով նախատեսված ակցիաների մասին նախօրոք իրազեկել հանրությանը.

3) կամավորների հայտագրման հնարավորության մասին հայտարարությունը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

6.Նախարարության գլխավոր քարտուղարին՝

1) նախարարության ենթակայության երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների վերակազմակերպման արդյունքում այդ հաստատություններում այլևս օգտագործման ոչ ենթակա գույքը սահմանված

կարգով ներառել սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման պահուստ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Սոցիալապես անապահով ընտանիքներին թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի բաշխման կարգը հաստատելու մասին» N1532-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրված 519 (239+280) հատ DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերը նախարարության համակարգի խնամք տրամադրող կազմակերպությունների շահառուներին բաշխման աշխատանքների ավարտից հետո՝ դեռևս չբաշխված թվով 56 սարքերը ներառել սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման պահուստ.

3) Նախարարությանն ամրացված կամ անհատույց անժամկետ պայմանագրով շահագործման հանձնված շենք-շինությունները համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն վերակառուցելու ընթացքում առաջացած շինանյութը, որը տվյալ շինարարության համար օգտագործման ենթակա չէ, սակայն կարող է օգտակար լինել դրա կարիքն ունեցող շահառուին, սահմանված կարգով ներառել սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման պահուստ.

4) նախարարության կողմից շահառուին իր բնակության վայրում սոցիալական շտապ օգնության տրամադրումը կազմակերպելու համար ապահովել փաթեթի տեղափոխումը՝ նախարարությանը սպասարկող հերթապահ ավտոմեքենայի միջոցով:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

ՆԱԽԱՐԱՐ **Հ. ԲԱԹՈՅԱՆ**

Հավելված
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի
2019թ. ի [illegible] «5»-ի N 71 Ա/1 հրամանի

ԾՐԱԳԻՐ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. Սոցիալական շտապ օգնության համակարգը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ՝ միջազգային կառույցների, հասարակական սեկտորում գործառնող ակտիվ, ինչպես նաև մասնավոր սեկտորի այլ կազմակերպությունների հետ համագործակցության պայմաններում:

2. Սոցիալական շտապ օգնության համակարգի նպատակն արագ արձագանքն է արտակարգ՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին, այսուհետ՝ շահառու) սոցիալական խնդիրների լուծման հարցում:

3. Սոցիալական շտապ օգնության համակարգի շրջանակներում տրամադրվում են սոցիալական ծառայություններ, այդ թվում բնաիրային:

4. Սոցիալական շտապ օգնության համակարգի շրջանակներում տրամադրվող հիմնական սոցիալական ծառայություններն են.

1) Հոգեբանական օգնություն.

2) Խնամքի ծառայությունների միանվագ տրամադրում.

3) Փաստաբանական օգնություն (քաղաքացիական գործերով).

4) Կացարանի տրամադրում.

5) Բնաիրային օգնություն:

5. Սոցիալական շտապ օգնության համակարգի արագ արձագանքման կենտրոնական և տարածքային պահուստները (այսուհետ՝ Պահուստ) կարող են ներառել

1)Մթերք և սնունդ.

2) Հագուստեղեն և կոշիկներ.

3) Գրքեր, գրենական պիտույքներ, դասագրքեր և դպրոցական պայուսակ և այլ գրասենյակային պարագաներ.

4) Անկողնային պարագաներ.

5) Կահույք.

6) Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներ.

7) Վառելափայտ.

8) Առաջին անհրաժեշտության կենցաղային ապրանքներ՝ սառնարան, լվացքի մեքենա և այլ խոհանոցային պարագաներ:

6. Պահուստում սույն Ծրագրի 5-րդ կետով նախատեսված ապրանքատեսականին հավաքագրվում է անհատ քաղաքացիների մասհանումներից, հասարակական, բարեգործական կազմակերպությունների հատկացումներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

7. Սույն Ծրագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված մթերքը և սնունդը պահուստի առանձին բաղադրիչ է (այսուհետ՝ մթերային բանկ), որի ձևավորումն ունի իր առանձնահատկությունները.

1) մթերային բանկը միանվագ կամ պարբերական ձևով ստանում է համապատասխան մթերքն արտադրողից (անհատ գյուղացիներից կամ գյուղացիական տնտեսություններից), խանութներից, սուպերմարկետներից և անհատ բարեգործներից.

2) Մթերքը հիմնականում դժվար վաճառվող է կամ պիտանելիության ժամկետի ավարտը մոտ է, ունի խաթարված փաթեթավորում (պիտանի է օգտագործման համար).

3) Մթերքի հատկացումները կատարվում են գնորդների կողմից կամավոր «մեծ առևտրի» (Նոր Տարվա, Սուրբ ծննդյան տոների, Սուրբ Զատկի, Սուրբ Խաչի կամ այլ տոնակատարությունների նախօրյակ) օրերին՝ կամավորների կան հասարակական կազմակերպությունների աշխատողների կազմակերպած ակցիաների շրջանակներում.

4) Մթերքը հատով է, հեղուկ մթերքը գործարանային պայմաններում շշալցված է, մթերքը փաթեթավորված է (թեկուզ խաթարված, բայց անվնաս), պահպանման հատուկ ջերմային պայմաններ (սառնարանային) պահանջող մթերքն ընդունվում է նման պայմանների առկայության կամ անմիջապես շահառուին տրամադրելու դեպքում.

5) Մթերքը պետք է բավարարի սննդի անվտանգության պետական ստանդարտներին.

6) Սնունդը հատկացվում է բարեգործական ճաշարանների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի համայնքների ղեկավարների) աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների, այսուհետ՝ երկուսը միասին՝ ՍԱՏՄ) ուղղորդմամբ, սոցիալական դեպքի վարման շրջանակներում՝ որպես անհատական սոցիալական ծրագրի միջոցառում:

8. Մթերային բանկում հավաքագրված մթերքը և սնունդը չեն վաճառվում և չեն գնվում, դրանց տրամադրումը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին) երաշխավորված է, այն չի կրում մշտական բնույթ և օգնության հիմնական ձև չէ:

9. Սույն Ծրագրի 5-րդ կետի 2-6-րդ ենթակետերով ստացված ապրանքատեսականին.

1)Պահուստում հավաքագրվում է անհատ քաղաքացիների կամ հասարակական, բարեգործական կազմակերպությունների կամ օրենքով չարգելված այլ աղբյուրների հատկացումների հաշվին, իսկ 3-րդ ենթակետով նախատեսվածը նաև՝ հունիս-օգոստոս ամիսների ընթացքում՝ խանութում գնորդների կողմից նվիրատվության միջոցով՝ կամավորների կամ հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված ակցիայի շրջանակներում.

2) կարող է լինել նաև օգտագործված, որը պետք է լինի մաքուր վիճակում և օգտագործման համար պիտանի:

10. Ծրագրի 7-րդ կետի 3-րդ և 9-րդ կետի 1-ին ենթակետերով նախատեսված ակցիաները կազմակերպող կամավորները կամ հասարակական կազմակերպությունները այդ մասին կարող են տեղեկացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն)՝ ակցիայի կազմակերպումից առնվազն յոթ օր առաջ՝

1)հանրությանն իրազեկման,

2) հավաքագրված ապրանքատեսականու պահեստավորման նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նպատակով:

11. ՍԱՏՄ-ները սոցիալական դեպքի վարման ընթացքում գնահատված կարիքների հիման վրա ձևավորված տվյալների շտեմարանում առանձնացնում են նաև այն ընտանիքների տվյալները, որոնք Պահուստում առկա ապրանքատեսականու կարիք ունեն:

12. Տեղեկությունը 114 թեժ գծով և այլ աղբյուրների ահազանգերից, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից, ինչպես նաև այլ աղբյուրներից, որոնք վկայում են կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող հանգմանքների մասին, ստանալու պարագայում, եթե Պահուստում անհրաժեշտ ապրանքատեսականին չի բավարարում (առկա չէ), ապա նախարարությունն ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած կողմերի, Պահուստին որևէ օգնություն տրամադրած բարեգործների, անհատ քաղաքացիների և կամավորների շրջանում էլեկտրոնային փոստի միջոցով տարածում է դեպքի պատմությունը, սոցիալական կարիքները, տրամադրում այլ փաստաթղթեր (առկայության դեպքում) և անհրաժեշտ հրատապ օգնության նկարագիրը՝ ակնկալելով արագ արձագանք, անձնական տվյալները չհրապարակելու և երրորդ անձի չտրամադրելու պայմանով:

13. Սույն Ծրագրի շրջանակներում սոցիալական ծառայությունները շահառուներին տրամադրվում են անվճար:

14. Սույն Ծրագրի 4-րդ կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված սոցիալական ծառայություններ տրամադրելու համար համապատասխան մասնագետները, ինչպես նաև 7-րդ կետի 3-րդ և 9-րդ կետի 1-ին ենթակետերով նախատեսված ակցիաները կազմակերպելու նախաձեռնություն հայտնած անձինք որպես կամավոր կարող են գրանցվել նախարարությունում:

15. Պահուստից ապրանքատեսականին տրամադրվում է շահառուին.

1)նախարարության նախաձեռնությամբ՝

ա. եթե, տեղեկությունը ստացվել է 114 թեժ գծով և այլ աղբյուրների ահազանգերից, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից, որոնք վկայում են կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող հանգմանքների մասին՝ որպես սոցիալական շտապ օգնություն.

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N1444-Ն որոշմամբ սահմանված սահմանամերձ բնակավայրերի բնակիչներին՝ համայնքի գնահատված սոցիալական կարիքների հիման վրա.

գ. ընտանիքում եռյակ կամ ավելի երեխայի միաժամանակ ծնվելու դեպքում՝ որպես նաև շնորհավորանք՝ ընտանիքին.

2) ՍԱՏՄ-ի հայտի հիման վրա՝ որպես սոցիալական դեպքի վարման շրջանակներում կազմված անհատական սոցիալական ծրագրի միջոցառում.

3) այն ստանալու մասին ստորագրությամբ:

16. Նախարարությունը սույն Ծրագրի 15-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունով նախատեսված օգնության տրամադրումը կազմակերպում է.

1)Նախարարության պահանջով՝ տվյալ դեպքի վայրի ՍԱՏՄ-ի կողմից սոցիալական կարիքների նախնական գնահատման տվյալների հիման վրա.

2) «բ» պարբերությունով նախատեսված օգնության տրամադրումը կազմակերպվում է տարեկան երկու անգամ և ըստ անհրաժեշտության՝ ՍԱՏՄ կամ համայնքի հիմնավորված հայտի հիման վրա:

17. Որպես սոցիալական շտապ օգնություն ձևակերպված փաթեթը տրամադրվում է շահառուին՝ իր բնակության վայրում ՍԱՏՄ-ի կամ նախարարության կողմից:

18. Օգնության հանձնումը շահառուին կազմակերպվում է նախարարության կողմից՝ իր նախաձեռնության կամ ՍԱՏՄ-ի կողմից՝ իր կողմից հայտի ներկայացման դեպքերում: Սույն գործընթացը (օգնության փաթեթի տեղափոխումը) կարող է կազմակերպել նաև ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած կողմերից մեկը՝ որպես իր ներդրում:

19. Տարածքային մակարդակում ձևավորված պահուստից ապրանքատեսականին տրամադրվում է շահառուին տվյալ մարզի (քաղաք Երևանի) ՍԱՏՄ-ների հայտի հիման վրա՝ կազմակերպող ՀԿ-ի միջոցով:

20. Անհատ քաղաքացիների մասհանումներից, հասարակական, բարեգործական կազմակերպությունների կողմից անձամբ իր սեփական կամ հավաքագրած միջոցներով նպատակային ծրագրերի իրականացման կամահայտնության դեպքում նախարարությունը, ՍԱՏՄ-ների միջոցով և (կամ) իր մասնակցությամբ, կարող է համակարգել այն: